ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ МЕЖДУНАРОДНЫХ ОТНОШЕНИЙ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF INTERNATIONAL RELATIONS

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 ● Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 ● 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia (+374 60) 71-00-78, (+374 60) 71-00-79, int.rel@ysu.am, www.ysu.am

№ 184 «___01___»___07_____2019 թ.

Արձանագրություն N 184

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 2019թ-ի հուլիսի 1-ի նիստի

Նիստին ներկա էին գիտխորհրդի 28 (քսանութ) անդամներից 21-ը:

Օրակարգ

1. 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում /զեկ.՝ դեկան, պրոֆ. Գեղամ Պետրոսյան/:
2. ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահի և կազմի հաստատում /զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան /:
3. Թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան /:
4. Գիտական աշխատության հրատարակության երաշխավորության հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան /:
5. Ընթացիկ հարցեր:

Խորհուրդը որոշեց.

1. 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքներն ընդունել ի գիտություն:
2. Միջազգային հարաբերությունների ընտրված ՈՒԳԸ նախագահ հաստատել միջազգային հարաբերություններ բաժնի 3-րդ կուրսի ուսանող Միքայել Մարտիրոսյանին, իսկ ՈՒԳԸ քարտուղար՝ քաղաքագիտության բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Ելենա Հարությունյանին:
3. Հաստատել թեկնածուական ատենախոսության հետևյալ թեման.

ա/ ԵՊՀ քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Փայլակ Աշոտի Ենգոյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ **«Փափուկ ուժի» կիրառման գաղափարաքաղաքական հիմքերը ԵԱՏՄ ինտեգրացիոն գործընթացներում**», ԻԳ.00.01 «Քաղաքական գիտության տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., դոցենտ Խաչիկ Գալստյանին:

4. Երաշխավորել հրատարակության՝
   ա/ Քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի պրոֆեսոր Ա. Ենգոյանի, դասախոս Ա. Սարգսյանի և ասպիրանտ Խ. Ազատյանի համահեղինակությամբ **«Ազգ-բանակ հայեցակարգի գաղափարաքաղաքական հիմքերը»** վերտառությամբ կոլեկտիվ մենագրությունը:

Գիտական խորհրդի նախագահ, պրոֆեսոր *Գ. Պետրոսյան*

Գիտական խորհրդի քարտուղար, դոցենտ *Գ. Բալասանյան*